



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնք, ՀՀ ք.Արմավիր, Հանրապետության փ.
32, Ֆաքս +374 237 28004, armavir.armavir@mta.gov.am

N 1578
26 նոյեմբեր 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 11 արտահերթ նիստի՝ «Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 73-Ա որոշումը.

1. Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նախատեսվել են հետևյալ փոփոխությունները, համաձայն որի՝

- կրճատվել է Արմավիր համայնքի ղեկավարի խորհրդականի հաստիքը

Նոր հաստիքացուցակում չեն նախատեսվել համայնքային ծառայության ներքոնշյալ պաշտոնները՝

- աշխատակազմի քարտուղարության բաժնի պետի տեղակալի / ծածկագիր 2.2-1/, առաջին կարգի մասնագետի / ծածկագիր 3.2-4/ և 2-րդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-2/, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման և տրանսպորտի վերահսկողության բաժնի 1-ին կարգի մասնագետի / ծածկագիր 3.2-8/ հաստիքները :

2. Նախատեսվել են համայնքային ծառայության պաշտոնների կարգերի փոփոխություններ.

- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնում 2-րդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-5/ հաստիքը փոխարինել 1-ին կարգի մասնագետի հաստիքով

- աշխատակազմի քաղաքաշինության և բնակարանային կոմունալ հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-9/հաստիքը փոխարինել 1-ին կարգի մասնագետի հաստիքով

- աշխատակազմի կրթության, գիտության, մշակույթի , սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի 2-րդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-7/հաստիքը փոխարինել 1-ին կարգի մասնագետի հաստիքով

- աշխատակազմի գույքահարկի հաշվառման , սպասարկման և գանձման բաժնի 2-րդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-8/հաստիքը փոխարինել 1-ին կարգի մասնագետի հաստիքով

3. Ելնելով համապատասխան աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունից՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նախատեսվել է՝

- սոցիալական աշխատող՝ համայնքային ծառայության առաջատար մասնագետի հաստիք

- աշխատակազմի տեխնիկական և սպասարկող անձնակազմում նախատեսվել է անասնաբույժի հաստիք

- աշխատակազմի տեխնիկական և սպասարկող անձնակազմում սեզոնային (01.11-ից մինչև 31.03) աշխատողների կաթսայատան 3 հնոցապան-օպերատորների հաստիքներ

Առաջարկվում է Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել վերոնշյալ փոփոխությունները :

Առդիր՝ 4 էջ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

Ո Ր Ո Շ Մ Ա Ն Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

<< 23 >> նոյեմբեր 2018 թվական N 73 - Ա

**ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների :
2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 9-ի <<Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշման NN 1-2 հավելվածները :
3. Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել << կառավարության լիազորված պետական կառավարման մարմին >> :
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարված մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Բ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 թվականի նոյեմբերի 23-ի
ԹԻՎ 11-ՍԲՏԱԿԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 73-Ա-ՔՐՈՇՄԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քարտուղարության բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական բաժին
3. Բյուջետային մուտքերի ապահովման և տրանսպորտի վերահսկողության բաժին
4. Քաղաքաշինության և բնակարանային կոմունալ հարցերի բաժին
5. Իրավաբանական բաժին
6. Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
7. Գույքահարկի հաշվառման, սպասարկման և գանձման բաժին
8. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արմավիրի տարածքային բաժին
9. Ներքին աուդիտի բաժին

ՀԱՎԵԼՎԱԾ 2
 ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
 2018 թ. ՎԱԿԱՆԻ ԾՈՅՆՔԵՐԻ 23-Ի
 ԹԻՎ 4 ԱՐՄԱՎԻՐԻ ՆԱԽՏԻ
 ԹԻՎ 73-Յ ԴՐՈՒՄԸ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿՑՆԵՐԻ
 ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՄԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը- 65 մարդ
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
համայնքի ղեկավար	1	350 000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
համայնքի ղեկավարի տեղակալ	2	220 000
համայնքի ղեկավարի առաջին օգնական	1	140 000
համայնքի ղեկավարի օգնական	1	135 000
ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ		
աշխատակազմի քարտուղար	1	160 000
աշխատակազմի առաջատար մասնագետ	1	90 000
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ		
բաժնի պետ	1	125 000
գլխավոր մասնագետ	2	110 000
I կարգի մասնագետ	3	85 000
II կարգի մասնագետ	1	80 000
ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ		
բաժնի պետ	1	125 000
գլխավոր մասնագետ	2	110 000
I կարգի մասնագետ	3	85 000
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱՆՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ		
բաժնի պետ	1	125 000
առաջատար մասնագետ	1	90 000
I կարգի մասնագետ	4	85 000
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՀԱՐՅԵՐ ԲԱԺԻՆ		
բաժնի պետ	1	125 000

գլխավոր մասնագետ	1	110 000
առաջատար մասնագետ	2	90 000
I կարգի մասնագետ	2	85 000
<i>ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ</i>		
բաժնի պետ	1	125 000
գլխավոր մասնագետ	1	110 000
առաջատար մասնագետ	1	90 000
I կարգի մասնագետ	1	85 000
II կարգի մասնագետ	1	80 000
<i>ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՄՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ԲԱԺԻՆ</i>		
բաժնի պետ	1	125 000
գլխավոր մասնագետ	1	110 000
առաջատար մասնագետ	1	90 000
I կարգի մասնագետ	3	85 000
<i>ԳՈՒՅՔԱԶԱՐԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՉՄԱՆ ԲԱԺԻՆ</i>		
բաժնի պետ	1	125 000
գլխավոր մասնագետ	1	110 000
առաջատար մասնագետ	1	90 000
I կարգի մասնագետ	2	85 000
<i>ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ</i>		
բաժնի պետ	1	240 750
I կարգի մասնագետ	2	107 800
<i>ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ</i>		
բաժնի պետ	1	125 000
առաջատար մասնագետ	1	90 000
<i>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՉՆԱԿԱԶՄ</i>		
տնտեսավար	1	90 000
անասնաբույժ	1	80 000
քարտուղարուհի	2	90 000
վարորդ	1	110 000
պահակ	1	75 000
հավաքարար	3	75 000
Կաթսայատան հեղցապան օպերատոր Սեզոնային(01.11-ից 31.03)	3	72 752
Ընդամենը	65	

3. 1974թ. Հունվարի 1-ին և դրանից հետո ծնված աշխատողների պաշտոնային դրույքաչափը 1 հաստիքային միավորի համար սահմանել ոչ պակաս 75168 դրամ.